ԱՌԵՒԱՆԳՄԱՄԲ ԵՒ ԳՆՄԱՄԲ ԱՄՈՒՍՆՈՒԹԻՒՆ

(Տեսութիւն հայ սովորութեական իրաւունքից

Խ. ՍԱՄՈՒԷԼԵԱՆԻ

I.

Ամուսնութիւնը շատ հին ժամանակում կատարւում էր կամ առևանգմամբ կամ գնմամբ։ Սակայն դեռ ևս իրաւագիտական աշխարհում որոշուած չէ, թէ ամուսնութեան սոյն երկու եղանակներն ինչ կարգով են գոյութիւն ունեցել։ Արդեօք սկզբում զարգացել է առևանգումն և ապա սրան յաջորդել գնումը, թէ երկուսն էլ միաժամանակ իբրև ամուսնութեան միակ միջոց համազօր գոյութիւն են ունեցել ժողովրդական կեանքում։

Մարդկութեան հասարակական կեանքի արշալուսին ընտանիքը միանգամայն զուրկ է եղել այն անհատական ընաւորութիւնից, որ ժամանակակից ընտանեկան կազմի յատուկ գիծն է։ Նախապատմական այդ ընտանիքները բաղկացած են եղել խմբակներից, որոնք կազմել են սերունդներ, տոհմեր, ցեղեր, և հիմնուած են եղել մայրիշխանութեան սկզբունքի վրայ։ Սերնդական խմբերը համայնօրէն են տիրել իրանց կանանց և ունեցել են ապատ սեռական յարաբերութիւնը։ Այսպիսի պայմաններում ամուսնական կապերի տևողականութեան մասին, ի հարկէ, խօսք անգամ չի կարող լինել, և հետևաբար զաւակների ու ծնող-հայրերի միջև անհնարին էր որոշ իրական յարաբերութիւն հաստատել։ Հետևապէս և միայն մայրը կարող էր ճանա-

Հայ մատենագրութեան թուանշային գրադարան